3. **Джамес Р., Доуглас М.** Стратегическое управление логистикой. – М.: ИНФРА - М, 2006.- 830 с.
4. **Сербин В.** Основы логистики: Учебное пособие. – Таганрог: Изд-во ТРТУ, 2004.- 188 с.
5. **Кузьбожев Э.Н., Тиньков С.А.** Логистика. - М.: КНОРУС, 2004.- 224 с.
6. **Голиков Е.** Маркетинг и логистика – новые инструменты хозяйствования. – М.: Экзамен, 2006.- 220 с.

Л.Л. АГАДЖАНЯН

ЛОГИСТИКА КАК НАУЧНО-ПРАКТИЧЕСКОЕ НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

Рассматриваются факторы развития и положения логистической методологии. Обсуждаются концепции логистики, а также цели и задачи логистических подходов. Изучено влияние логистики на экономические функции организации и представлено определение понятия логистики.

Ключевые слова: логистика, развитие, фактор, концепция, цель, задача, функция.

L.L. AGHAJANYAN

LOGISTICS AS A SCIENTIFIC-PRACTICAL TREND OF ECONOMIC DEVELOPMENT

Options of logistics methodology and development factors are considered. Logistics concepts, as well as goals and tasks of logistic approaches are discussed. The logistics impact on the economic functions of the organization is studied, and the definition of the concept “logistics“ is introduced.

Keywords: logistics, development, factor, concept, goal, task, function.

ՀՏԴ 005.332.4:005.591.6

Ն.Պ. ԱԴՈՆՑ

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դիտարկվում են երկրի տնտեսական զարգացման համատեքստում ՀՀ մրցունակության հիմնահարցերը, և հիմնավորվում է այն տեսակետը, ըստ որի ՀՀ մրցունակությունն ապահովվող հիմնական ոլորտը ինովացիաների ոլորտն է:

Առանցքային բառեր. մրցակցային առավելություններ, ապրանքի մրցունակություն, ձեռնարկության մրցունակություն, երկրի մրցունակություն, ինովացիոն ոլորտ, դրական կախվածություն:

Ժամանակակից պայմաններում միջազգային մրցակցությունն ուժեղանում է շուկայի կոնյունկտուրայի վատթարացմամբ՝ հանուն <մեծ պատառի> պայքարից վերածվելով արդեն պայքարի հանուն գոյատևման:

Գլոբալ մրցակցության տրամաբանությունը հանգում է երկրների տնտեսական զարգացման հարցի քննարկմանը, իսկ խնդիրն ինքնին՝ մրցակցային առավելություններին և մրցունակությանը: Մրցակցային առավելությունների խնդիրը կենտրոնական տեղ է զբաղեցնում մրցակցության տեսությունում և պրակտիկայում, քանի որ գոյատևելու և նպատակներին հասնելու համար կոշտ մրցակցային պայքարում ցանկացած ձեռնարկություն պետք է ունենա որոշակի առավելություններ:

Միջազգային մրցունակությունը հետազոտության սուբյեկտի՝ ժամանակի որևէ կոնկրետ պահի համար հաշվարկված համալիր սոցիալ-տնտեսական բնութագիր է, որը ցույց է տալիս նրա գերազանցության մակարդակը իրական մրցակիցների նկատմամբ: Ավելի պարզեցված՝ միջազգային մրցունակությունը կամ պետության մրցակցային առավելությունը տնտեսական, գիտատեխնիկական, կազմակերպակառավարչական, մարքեթինգային և այլ գործոնների ամբողջություն է, որը դրսևորվում է ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև երկրի հասարակական պետական համակարգի բոլոր կողմերի արդյունավետ կարգավորման միջոցով:

Մրցակցային առավելությունների տեսությունը ելնում է այն դրույթից, որ յուրաքանչյուր երկիր ունի որոշակի, որպես կանոն, առանձնահատուկ մրցակցային առավելությունների ամբողջություն: Ընդ որում, պետության քաղաքականությունը պետք է ուղղված լինի երկրի մրցակցային առավելությունների պահպանմանն ու զարգացմանը՝ հիմնականում երկրում առողջ մրցակցային դաշտի ձևավորմանը նպաստելով:

Այս ոլորտում հետազոտություններ կատարել են բազմաթիվ գիտնականներ և մասնագետներ, որոնցից առավել հիշատակման արժանի է Մայքլ Պորտերը: Նրա կարծիքով՝ «երկրի մրցունակությունը որոշվում է իր ռեսուրսների օգտագործման արդյունավետությամբ»:

Միջազգային մրցունակության բացակայության դեպքում արտադրողականության մակարդակը մի երկրում բոլորովին կախված չէր լինի մյուս երկրների դրությունից: Սակայն միջազգային առևտուրն ու արտադրության գործոնների տեղափոխումը հնարավորություն են տալիս և՛ երկրների ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման համար, և՛, միաժամանակ, դրա բարձրացման կամ կայուն մակարդակում պահպանման վտանգ են ստեղծում:

Երկրները, մրցակցային պայքարում ձգտելով հաջողության, մասնագիտանում են այն ոլորտներում, որտեղ նրանց ձեռնարկությունները համեմատաբար առավել մրցունակ են, և ձեռք են բերում այն ապրանքներն ու ծառայությունները, որոնց ուղղությամբ իրենց ձեռնարկությունները զիջում են արտասահմանյաններին:

Այստեղ նշենք, որ առանձնացվում են երկրների մրցունակության երեք հիմնական մակարդակներ՝ ապրանքի մրցունակություն, ձեռնարկության մրցունակություն և երկրի մրցունակություն: Ընդ որում, երկրի մրցունակությունը կախված է

ձեռնարկության մրցունակությունից, իսկ վերջինս՝ ապրանքի մրցունակությունից և հակառակը:

Պորտերը բազմիցս ընդգծում է, որ ոչ թե պետությունները, այլ ձեռնարկություններն են գտնվում միջազգային մրցակցության առաջնային գծում: Սակայն այդ ձեռնարկությունների գտնվելու երկրները, նրա կարծիքով, «կենտրոնական տեղ են զբաղեցնում ձեռնարկության միջազգային հաջողության գործում»: Իսկ ընկերության ռազմավարությունը լրացնում և ամրակայում է իր երկրի հիման վրա ստեղծված առավելությունները:

Անդրադառնալով ՀՀ մրցակցային առավելություններին՝ պետք է նշենք, որ բոլոր չափանիշներով Հայաստանն ունի փոքր, զարգացող տնտեսություն, որը գտնվում է վերափոխումների վաղ շրջանում և ունի ցածր շահույթ և տնտեսության պարզ կառուցվածք: Հիմնական ոլորտները՝ գյուղատնտեսությունը, էլեկտրաէներգիան, սննդամթերքի արտադրությունը և շինարարությունը, Հայաստանի տնտեսության գերակշռող ոլորտներն են, որոնց արտադրանքը կազմում է ընդհանուր արտադրության 2/3-ը, այն դեպքում, երբ մեծ եկամուտ բերող արտադրությունները և մտավոր ծառայությունները դեռ զարգացման սկզբնական շրջանում են: Հայաստանի ընթացիկ աճը չնայած բավականին մեծ է, այնուամենայնիվ, այն սկսել է շատ ցածր մակարդակից և սկզբից ֆինանսավորվել է անկայուն արտաքին աղբյուրներով, ինչպես, օրինակ, զարգացման օժանդակության ծրագրերով, Սփյուռքի դրամաշնորհներով և ներդրումներով: Ինչպես և շատ զարգացող երկրներում, Հայաստանն ունի մեծ քանակով ապօրինի տնտեսություններ, ինչի պատճառով համեմատությունները հստակ չեն և երբեմն նույնիսկ անհամոզիչ: Պարզ է, որ եթե ՀՀ-ն խուսափի աշխարհում տեղի ունեցող նորարական գործընթացներում մասնակցությունից, կնշանակի, որ նա դուրս կմնա քաղաքակիրթ զարգացման ընթացքից:

Հայտնի է, որ Հայաստանի տնտեսությունը կառուցվածքի տեսանկյունից ունի բավականին ցածր դիվերսիֆիկացման մակարդակ, արտահանումը փոքր է և ունի որակական թույլ բնութագրիչներ: Վերջին 15 տարիներին արձանագրված տնտեսական աճի բարձր տեմպերը չափազանց մեծ կախվածություն են ունեցել շինարարության ճյուղից և մասնավոր տրանսֆերտներից: Այս բոլոր գործոնները միասին վերցրած չեն կարող ապահովել երկարաժամկետ և կայուն տնտեսական զարգացում և խոցելի են դարձնում մեր երկրի տնտեսական համակարգը: Դա ակնառու կերպով դրսևորվեց 2008-2009թթ.՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, որի հետևանքները դեռևս զգացնել են տալու:

Հարկ է նշել, որ ժամանակակից պայմաններում նորարարությունը, որպես տնտեսական զարգացման և մրցունակության շարժիչ ուժ, կարևոր տեղ է զբաղեցնում երկրի մրցակցային առավելությունների շարքում: Նորարարությունը վիճակագրորեն մեծապես փոխկապակցված է երկրի ընդհանուր բարեկեցության ցուցանիշի՝

մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հետ: Այն չափազանց կարևոր է գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու գործընթացում և կենսական նշանակություն ունի Հայաստանի համար, որը չունի ելք դեպի ծով, բնական ռեսուրսները սահմանափակ են, իսկ տրանսպորտային ծախսերը՝ մեծ:

Նորարարությունը նոր ապրանքի, գործընթացի կամ ծառայության ներմուծումն է, որը ստեղծում է իրական առևտրային կամ սոցիալական արժեք: Նորարարությունը կարող է ի հայտ գալ ոչ միայն ապրանքների և ծառայությունների, այլև գործընթացների, մարքեթինգի, բաշխման և կազմակերպման բնագավառներում: Նորարարությունը կարող է վերաբերել նաև արժեքային շղթային և ստեղծել միանգամայն նոր արտադրանքներ և, նույնիսկ, տնտեսության նոր ճյուղեր: Միայն գյուտի առկայությունը բավարար չէ, անհրաժեշտ է նաև, որ նորարարությունն առևտրային կամ սոցիալական կիրառություն ունենա:

Նորարարության արդյունքի գնահատման հիմնական չափորոշիչն է արտադրողականության բարձրացումը, հատկապես այն մասով, որը չի բացատրվում լրացուցիչ աշխատուժով կամ կապիտալով: Դա իր հերթին հանգեցնում է կյանքի պայմանների բարելավմանը, որը կայուն դրսևորում ունի երկարաժամկետ կտրվածքով և հիմնված չէ այնպիսի ժամանակավոր գործոնների վրա, ինչպիսիք են մասնավոր տրանսֆերտները, սպեկուլյատիվ ներդրումները կամ օտարերկրյա օգնությունը: Համաշխարհային տնտեսությունում մրցունակ լինելու համար յուրաքանչյուր երկրի թե՛ տեղական, թե՛ արտահանող արդյունաբերությունները պետք է լինեն նորարար:

ՀՀ նորարարությունների մրցունակության բարձրացման գործում կարևոր նշանակություն կարող են ունենալ օտարերկրյա ուղղակի ներդրումները, որոնց միջոցով կիրականացվի բարձր տեխնոլոգիաների փոխանցում և յուրացում, կառավարման մատչելի համակարգի ներդրում, նոր հմտությունների և գիտելիքների փոխանցում, տեխնոպարկերի ստեղծում, բուհերի, կրթական որակի բարելավում, միջազգային չափանիշներին համապատասխանող որակավորված աշխատուժի ներգրավում, ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիաների կլաստերների զարգացում:

Շումպետերի գաղափարից «ներշնչված» վաղ էմպիրիկ հետազոտություններում [2] գնահատվում էր ինովացիաների և մրցակցության միջև առկա գծային կապը տարբեր ճյուղերում, և, սովորաբար, հայտնաբերվում էր բացասական կախվածություն, ինչը համապատասխանում էր ժամանակի տեսական պատկերացումներին: Շերերը [3] զարգացրեց ուսումնասիրությունների այդ ուղղությունը՝ առաջ քաշելով հիպոթեզ ինովացիաների և մրցակցության միջև ոչ գծային կախվածության առկայության վերաբերյալ. նախնական ցածր ցուցանիշների պայմաններում մրցակցության ուժեղացումը սկզբում հանգեցնում է ինովացիաների ինտենսիվության բարձրացման, այնուհետև՝ նվազման: Բայց դրանից հետո հետազոտողները այլևս չվե-

ռադարձան ոչ գծային կապին: Նիկելլը [4], Բլանդելլը, Գրիֆֆիտը և Վան Ռենենը [5] նույնպես հայտնաբերեցին ինովացիաների և մրցակցության դրական կախվածությունը:

Հայաստանը կանգնած է ազգային նորարարական համակարգի բարելավման խնդրի առջև: Այն պետք է կասեցնի ժառանգած ակտիվների և մրցակցային առավելությունների քայքայումը, ամրապնդի ներդրանքն ու ինստիտուցիոնալ կարողությունները, մշակի հստակ և համակողմանի նորարարության աջակցման քաղաքականություն և ռազմավարական ուղղվածություն, բարելավի հիմնական գործող կառույցների միջև համագործակցությունն ու փոխհարաբերությունները, խրախուսի վստահությունը գործարար և հետազոտող համայնքների միջև և բարելավի առևտրայնացման հնարավորությունները՝ հետազոտական և գիտական պատշաճ կարողություններից առավելագույն արժեք կորզելու համար: Հայաստանի հաստատուն ավանդույթները մաթեմատիկայի և գիտության ոլորտներում, համաշխարհային ճանաչում գտած գիտնականների առկայությունը և ժառանգած հետազոտական կարողությունները համապատասխան ներդրանքի, օժանդակող մեխանիզմների և ռազմավարական ուղղվածության հետ համատեղ, կարող են Հայաստանի համար գիտելիքահենք տնտեսության վերածվելու լավ հիմք ծառայել:

Ինովացիոն ոլորտի զարգացման որոշակի միտումների հետ մեկտեղ ոլորտում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Դրանք են, մասնավորապես, տեղեկատվական հասարակության և դրա տարբեր բաղադրիչների ձևավորման, ներդրման և զարգացման խնդիրները, ինովացիաների ոլորտում ներդրումների խթանման և կազմակերպությունների ապրանքների և ծառայությունների տեղական և միջազգային շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրները, գործարար և տեխնիկական խորհրդատվության ստացման և կադրերի մասնագիտական ուսուցման և վերապատրաստման առկա դժվարությունները, ինովացիոն ոլորտի մասնավոր հատվածի և կրթական համակարգի միջև կապերի թերի զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Портер М.** Международная конкуренция. Конкурентные преимущества стран.-М., 1993.- 24 с.
2. **Schumpeter Joseph.** Capitalism, Socialism and Democracy.-London: Allen Unwin, 1943.
3. **Scherer Frederick.** Market Structure and the Employment of Scientists and Engineers // American Economic Review.- 1967.- LVII.- P. 524–531.
4. **Nickell, Steven.** Competition and Corporate Performance // Journal of Political Economy.- 1996.- CIV.- P. 724–746.
5. **Blundell, Richard, Rachel Griffith, and John Van Reenen.** Market Share, Market Value and Innovation in a Panel of British Manufacturing Firms // Review of Economic Studies.- 1999.- LXVI.- P. 529–554.

Н.П. АДОНЦ

РОЛЬ ИННОВАЦИИ В КОНТЕКСТЕ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ СТРАНЫ

Рассматриваются вопросы конкурентоспособности РА в контексте экономического развития страны. Обосновывается точка зрения, согласно которой основным сектором, обеспечивающим конкурентоспособность РА, является инновационный сектор.

Ключевые слова: конкурентные преимущества, конкурентоспособность продукции, конкурентоспособность предприятия, конкурентоспособность страны, инновационный сектор, положительная зависимость.

N.P. ADONTS

THE ROLE OF INNOVATION IN THE CONTEXT OF THE COUNTRY'S COMPETITIVENESS

The competitiveness of Republic of Armenia in the context of the economic development of the country are considered.The point of view according to which the main sector ensuring Armenia's competitiveness is the innovation sector.

Keywords: competitive advantages, competitiveness of product, competitiveness of an enterprise, competitiveness of a country, innovation sector, positive relationship.

ՀՏԴ 332.322.5

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ, Լ.Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Դիտարկվում են տնտեսական համակարգի զարգացման վրա տեխնոլոգիական տրանսֆորմացիայի ազդեցության հիմնախնդիրները: Ժամանակակից պայմաններում տեխնոլոգիական ինովացիոն գործընթացը չի կարող ամբողջությամբ ներառվել տնտեսական գործունեության մեջ: Այս իմաստով առանձնահատուկ ուշադրության են արժանի տեխնոլոգիական ինովացիաների տնտեսական և արտատնտեսական կարգավորման, դրանց զուգակցման հարցերը:

Առանցքային բառեր. տեխնոլոգիական տրանսֆորմացիա, տնտեսական համակարգ, ինովացիոն ֆիրմաներ, բարձր տեխնոլոգիական կորպորացիաներ, կողմնակի էֆեկտներ, կապիտալի շուկա, նոր տեխնոլոգիական կացութաձև:

Գաղտնիք չէ, որ ներկայիս տնտեսական զարգացումների գրեթե բոլոր հիմնախնդիրների լուծումն առնչվում է տեխնոլոգիական առաջընթացի հետ: Թերևս դա է պատճառը, որ այսօր շատ երկրներ փորձում են ձեռք բերել մրցակցային առավելություններ՝ ստեղծելով հատկապես տեխնոլոգիական ինովացիոն ենթակառուց-